ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 5/6.2

քսանութը մարտի 2013 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆԱԼԻՏԻԿ ՔԻՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԸ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ԱՄԲԻՈՆԸ <ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԱԼԻՏԻԿ ՔԻՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ> ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնում հաստիքների սակավությունը, դրա արդյունքում ամբիոնի բնականոն գործունեությանն առնչվող բարդությունները և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 2-րդ մասով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ մասով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի անալիտիկ քիմիայի ամբիոնը միացնել անօրգանական քիմիայի ամբիոնին։
2. Նոր կազմավորված ամբիոնն անվանակոչել <Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն>:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ